ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԱԼՎԱՆ ԾԱՂԻԿ ՍՈՑԻԱԼ-
ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցը մշակվել է **«Կլիմայի փոփոխության ազդեցությունը գյուղաբնակ կանանց վրա»** հետազոտական ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվել է «Ալվան ծաղիկ սոցիալ-կրթական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ Հայաստանում կանանց հիմնադրամի ֆինանսավորմամբ, 2024 թվականի սեպտեմբեր – նոյեմբեր ամիսներին:

«Սույն զեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են «Ալվան ծաղիկ սոցիալ-կրթական կենտրոն» ՀԿ-ին և կարող են չհամընկնել Հայաստանում կանանց հիմնադրամի տեսակետների հետ»:

Բովանդակություն

Ներածություն 3

Մեթոդաբանությունը 5

Հետազոտության արդյունքների վերլուծություն 7

Աղետներ, ռիսկեր և վտանգներ 7

Աղետների հաճախականությունը 8

Առավել տուժած սոցիալական խմբերը 8

Ռեսուրսներ, որոնց սպառնում են աղետները 9

Կենսամիջոցների ամենակարևոր ակտիվներն ու ռեսուրսները 10

Ժամանակի ընթացքում աղետների փոփոխությունները՝ առաջացումը, հաճախականությունը, ինտենսիվությունը, փոփոխվող այլ իրավիճակներ 11

Աղետների ընկալման և արձագանման, գյուղատնտեսական գործունեության գենդերային նկատառումներ 12

Օրացույցների համեմատություններ 15

Ապագայի սցենարներ 16

Եզրահանգումներ 18

Հավելվածներ 22

Ներածություն

Սույն զեկույցը կազմվել է «Կլիմայի և աղետների ռիսկերի մասնակցային գնահատման» (PACDR) գործիքով իրականացված հետազոտության արդյունքներով, Հայաստանում կանանց հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Կլիմայի փոփոխության ազդեցությունը գյուղաբնակ կանանց վրա» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է «Ալվան ծաղիկ սոցիալ-կրթական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագիրն իրականացվել է 2024 թ. սեպտեմբեր -նոյեմբերի ամիսների ընթացքում: Հետազոտության հիմնական հանդիպումները տեղի են ունեցել Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր և Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Դդմաշեն գյուղերում, 2024 թվականի հոկտեմբերի 27-ին և նոյեմբերի 2-ին:

Հետազոտության արդյունքները որոշակիորեն տարբերվում են՝ ելնելով կիրառված մեթոդաբանությամբ ստացված արդյունքներից՝ առավել վիզուալ և գործընթացային պատկերելով գնահատումն ու արդյունքները:

PACDR գործիքը (participatory assessment of climate and disaster risks)[1] նախատեսված է աղետների, խոցելիության և տեղական ռազմավարությունների գնահատում իրականացնելու համար՝ առավել մասնակցային եղանակով: Այն կիրառվում է համայնքների հարմարվողականության առավել արդյունավետ և կայուն ռազմավարություններ մշակելու համար: Վերլուծության արդյունքների մեջ արտացոլված են գյուղական և քաղաքային համայնքների տեղական շահագրգիռ կողմերի մոտեցումները և կարծիքները: Գործիքի ընտրությունը պայմանավորված է եղել դրա առավելություններով, նորարարական բնույթով, ճկունությամբ և տեղային ադապտացիայի հնարավորությամբ:

Մասնավորապես, այն հնարավորություն է տվել փորձարկել այս մեթոդը՝ հարմարեցնելով տեղական համատեքստին: Միևնույն ժամանակ, մեթոդի մասնակցայնության շնորհիվ համայնքի բոլոր շահագրգիռ կողմերը ներկայացված են

[1] https://pacdr.net/

եղել գնահատման գործընթացում: Հետևապես, այն ծառայել է ոչ միայն որպես տեղեկատվության հավաքագրման մեթոդ, այլ նաև գործընթաց, որն արդեն իսկ ծառայում է խնդրի վերհանման շուրջ շահագրգիռ կողմերի մոբիլիզիացիային:

Պետք է նշել, որ բացի դրանից, գործիքի ամբողջական կամ մասնակի օգտագործումը փորձարկվել է տարբեր երկրներում, տարբեր մշակութային համատեքստերում և հնարավորություն է տվել շահերի պաշտպանության և լոբբիստական աշխատանքի համար անհրաժեշտ տվյալներ և արդյունքներ գրանցել:

Սույն ծրագրի շրջանակներում հետազոտական խումբն անցել է PACDR գործիքակազմի վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են ՀԱԱՀ Ագրոնոմիական ֆակուլտետի դեկանի տեղակալ Սասուն Մամաջանյանը, գենդերային հարցերով փորձագետ Եստեր Գրիգորյանը: Հետազոտության զեկույցը պատրաստել է սոցիոլոգ Գայանե Հովակիմյանը:

Հետազոտության արդյունքների վերլուծության մեջ հիմք են ծառայել մեթոդաբանությամբ ստացված տվյալները: Հետազոտության հիմնական հանդիպումներին մասնակցած անձանց բնութագրիչներն արտահայտված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հետազոտության հիմնական հանդիպումներին մասնակցած անձինք

Բնակավայր	Մասնակիցների քանակ		Տարիքային շեմ	
	Կանայք	Տղամարդիկ	Մինչև 35 տ.	36 և ավելի տ.
Սառնաղբյուր	9	10	9	10
Դդմաշեն	13	5	8	10

Վերլուծության բաժինները համապատասխանում են գործիքի կառուցվածքին:

Մեթոդաբանությունը

«Կլիմայի և աղետների ռիսկերի մասնակցային գնահատման» (PACDR) գործիքով գնահատման մեթոդաբանությունը համատեղ մշակվել է շվեյցարական HEKS-EPER և գերմանական Brot für die Welt (Հաց Աշխարհին) կազմակերպությունների կողմից: Այս գնահատումը մասնակցային աշխատանք է, որը հնարավորություն է տալիս ինտեգրել կլիմայի և աղետների ռիսկերին ուղղված ջանքերը համայնքային պլանավորման և զարգացման գործընթացներում: Գնահատման նման մեթոդաբանությունը օգնում է համայնքներին բացահայտել տեղական կլիմայական և աղետների ռիսկերը, կանխել կամ նվազեցնել, մեղմել դրանց հետևանքները: Գնահատման հիմնական առանձնահատկություններից է նաև նախապատրաստական աշխատանքները, որոնք սույն հետազոտության շրջանակում ներառել են՝

- գործիքի ադապտացիան հետազոտվող համայնքների կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան, այդ թվում՝ առաջարկվող մոդուլների ընտրությունը և դրանց շրջանակի տեղայնացումը,
- վերապատրաստում անցած ֆասիլիտատորների առկայությունը. գործիքի և գնահատման գործընթացի իրականացման համար ընտրվել են ոլորտին գիտակ և փորձառու մասնագետներ,
- գիտելիքի և փորձառության փոխանցումը գնահատման ողջ ժամանակահատվածում և գործընթացում,
- տարբեր համայնքների ընտրությունը՝ համեմատելու, խնդիրները տեսակավորելու, տարբեր համայնքների կարիքները մեկտեղելու և ջատագովություն անելու հնարավորություն,
- համայնքային կյանքի վերաբերյալ գենդերային պատկերացումներն ու փորձը տարբերակելու հնարավորություն:

Համայնքների ընտրությունը կատարվել է՝ ելնելով հետևյալ չափանիշներից.

1. կանանց նկատմամբ խտրականության բարձր մակարդակ Շիրակի և Գեղարքունիքի մարզերում,

2. կարծրատիպերի առավել խորը ընկալումներ նշված մարզերում ըստ հետազոտությունների և տեղային ուսումնասիրությունների,

3. քաղաքին մոտ, առավել աշխույժ գյուղական բնակավայրեր, որտեղ կանայք նաև այլ ընտրությունների, գյուղատնտեսական աշխատանքից զատ այլ աշխատանքով զբաղվելու հնարավորություն ունեն, այս առումով Սառնաղբյուրը շատ մոտ չէ, բայց ակտիվ են մարդիկ, համեմատաբար մեծ գյուղ է,

4. գյուղատնտեսության առումով հնարավորինս նման կլիմայական պայմաններ և նույնատիպ լանդշաֆտներ:

Գործիքից ընտրվել են այն մոդուլները, որոնք առավել կիրառել են եղել Հայաստանի նշված համայնքների համատեքստում: Նշված մոդուլները ներկայացված են սույն հաշվետվության մեջ՝ որպես հավելված:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Աղետներ, ռիսկեր և վտանգներ

Ընդհանուր առմամբ, համայնքներում իրականացված մասնակցային գնահատման քննարկումների արդյունքում վեր են հանվել այն աղետներն ու վտանգները, որոնք վերջին տարիներին տեղի են ունեցել, բնորոշ են համայնքներին՝ ելնելով կլիմայական առանձնահատկություններից և դրանց դիմակայության աստիճանից, առկա ենթակառուցվածքներից, դասակարգվել են աղետներն ու ռիսկերը՝ ըստ համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ազդեցության աստիճանի։

Ցրտահարությունը, երաշտը, կարկուտը հետազոտության մեջ ներառված երկու համայնքների հիմնական աղետներն ու վտանգներն են (Հավելված 2. Նկար 1)։ Դրանք առավել չափով վնասում են գյուղատնտեսական գործունեության, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումները։ Բացի նշվածից, սպառնացող աղետների շարքում են նաև ջրհեղեղները, ուժեղ քամիները, հողերի էրոզիան։ Աղետների թվարկումն ու նկարագիրը ոչ միայն հնարավորություն է տվել մասնակիցներին պատկերելու և դիտարկելու իրենց խնդիրները, այլ նաև վերլուծելու դրանց պարբերականությունը և դրանց դիմակայելու միջոցները։

Մինչ աղետների թվարկումը մասնակիցները նախ կատարել են ազդեցության շղթայի վերլուծություն՝ «Հիմնախնդիր – աղետ – առաջնային ազդեցություն – երկրորդային ազդեցություն» վարժանքի միջոցով, ապա ազատ քննարկման և մտագրոհի եղանակով թվարկել են այն բոլոր հնարավոր աղետները, որ հանդիպել կամ հանդիպում են իրենց բնակավայրում։ Աղետները գրի առնելուց հետո յուրաքանչյուր մասնակից «քվեարկել է»՝ առանձնացնելով իր կարծիքով ամենավտանգավոր աղետն իր բնակավայրում։ Հատկանշական է այն, որ մինչև ազդեցության շղթայի վարժանքը կատարելը թվարկված աղետները երբեմն չեն հայտնվել աղետների գլխավոր եռյակում (Հավելված 2. Նկար 1)։

Աղետների հաճախականությունը

Նշված աղետները կրում են սեզոնային բնույթ. լինելով հիմնականում ամենամյա՝ աղետների սեզոնային պարբերականությունն արդեն իսկ բացասական ազդեցություն է տնային տնտեսությունների ամենամյա եկամուտների վրա։ Այսպես՝ պարբերականությունը բերում է գյուղատնտեսական գործունեության մեջ բնակչության առավել նվազ նեգրավման։ Նաև դրա արդյունքում այն չի դիտվում որպես միակ հիմնական եկամուտ, և բնակիչների մի մասը ապավինում է արտագնա աշխատանքին կամ նախընտրում է ոչ գյուղատնտեսական աշխատանքը՝ համայնքին մոտ քաղաքային բնակավայրում։ Հաճախականությունը նաև բնակիչներին հետ է պահում նոր նախաձեռնություններից կամ զարգացման հնարավորությունից՝ հիմնականում մնալով կենսագործունեության միևնույն մակարդակի վրա։

Առավել տուժած սոցիալական խմբերը

Ուսումնասիրված համայնքներում աղետներից առավել տուժում են գյուղացիական տնտեսություն ունեցող տնային տնտեսությունները՝ այդ թվում անասնապահությամբ զբաղվող, այգեգործությամբ զբաղվող ֆերմերները, հատկապես այն բնակիչները, որոնք ունեն առավել մեծ մակերեսով հողատարածքներ, ջերմոցներ և այգիներ։ Այսպիսով, մի կողմից նրանք տիրապետում են առավել մեծ ռեսուրսների, մյուս կողմից առավել խոցելի են իրենց ռեսուրսներին առնչվող ռիսկերի կառավարման իմաստով, քանի որ մեծ ֆինանսական և այլ կորուստներ են ունենում առավել մեծ հողատարածքների, ջերմոցների, այգիներ սեփականատերերը։

Քանի որ գյուղական համայնքներում բնակչության զգալի մասը այս կամ այն չափով ներառված է գյուղատնտեսական գործունեության մեջ, ապա ուղղակի ազդեցության կրող է յուրաքանչյուր ոք, և ամեն սեզոն ունենում է տնտեսական կորուստներ՝ չունենալով աղետների արձագանքման միջոցներ։

Այսպիսով, հաշվի առնելով, որ գյուղական համայնքներում եկամուտները գոյանում են հիմնականում հենց գյուղատնտեսական գործունեությունից, ապա ստացվում է, որ այս խնդիրները բնորոշ են առավելապես բոլոր բնակիչներին, ովքեր ներկայում կամ ապագայում կցանկանան իրականացնել գյուղատնտեսական գործունեություն։

Առավել տուժված են նաև տեղահանված անձինք, որոնք առավել քիչ ռեսուրսներ ունեն և այդ ռեսուրսների սղությունն էլ ավելի բացասական հետևանքներ է ունենում նրանց կենսագործունեության վրա։

Այսպիսով, աղետներն ազդում են հետազոտված համայնքների ողջ բնակչության վրա՝ այս կամ այն չափով։ Խոշոր գյուղատնտեսական ֆերմերային տնտեսություններն էական վնասներ են կրում և որպես բիզնես, զարգացման առավել քիչ միտում են դրսևորում։ Տնային տնտեսություններում հատկապես տուժում են խոցելի ընտանիքները, որոնք որևէ եկամտի աղբյուր, հիմնական զբաղվածություն բացի գյուղատնտեսական գործունեությունը, չունեն, այդ թվում՝ տեղահանված անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեց կանայք։

Ռեսուրսներ, որոնց սպառնում են աղետները

Ընդհանուր առմամբ աղետները սպառնում են համայնքներում առկա կարևոր ռեսուրսներին։ Մասնավորապես՝ վարելահողները, արոտավայրերը, այգիները, անտառները, գյուղատնտեսական հողահանդակները էապես ազդվում են այս աղետներից։ Արժեշղթայի ազդեցության հետևանքով այդ կորուստները և դրանց բացասական ազդեցությունները իրենց հերթին ազդում են այլ գործոնների վրա, մասնավորապես՝ բերքի վաճառքի, տնային տնտեսությունների բարեկեցության, համայնքների զարգացման հեռանկարների վրա։ Հետաքրքիր է, որ քննարկումների արդյունքում որպես վնասվող ռեսուրս նշվել է նաև թասիբը՝ այս համատեքստում արժանապատիվ աշխատանքով համապատասխան եկամուտ ստանալու կորուստը, ինչը ոչ միայն տնտեսական, այլ նաև բարոյական վնաս է։

Չնայած շենք-շինությունները առավել քիչ են վտանգվում նշված աղետներից, այնուամենայնիվ, քննարկմանը մասնակից կանանց կողմից նշվել է, որ կարկուտները վնասում են դպրոցի շենք-շինություններին:

Կենսամիջոցների ամենակարևոր ակտիվներն ու ռեսուրսները

Մասնակիցների համար կարևոր կենսամիջոցների շարքում են ինչպես բնական ռեսուրսները, այնպես էլ ենթակառուցվածքները, հոգևոր-մշակութային արժեքները: Մասնավորապես, գյուղամիջյան ճանապարհը, սարերը, անտառները, արտերը, այգիները, արոտավայրերը, վարելահողերը, գետը, լիճը, աղբյուրը, քարերի հանքը բնական ռեսուրսների շարքում են: Կամուրջները, մանկապարտեզը, դպրոցը, հիվանդանոցը, համայնքապետարանը կենսագործունեության ենթակառուցվածքներ են: Գերեզմանոցը, գյուղի եկեղեցիները, ակումբի շենքը, սրբավայրերը հոգևոր և մշակութային միջոցներ և ռեսուրսներ են: Կարի արտադրամասը, քարի հանքը, ջերմոցները տնտեսական գործունեության այն ռեսուրսներն են, որոնք տնտեսական հնարավորություն են տալիս այս կամ այն չափով: Ռեսուրսների քարտեզագրումը կարևոր միջոց է համայնքի ուժեղ կողմերը և ակտիվները վեր հանելու, դրանց առավել նպատակային օգտագործման համար քայլեր նախաձեռնելու համար: Դա նաև հնարավորություն է տվել մասնակիցներին վերարժևորել համայնքային կյանքի միջոցները, որոնք համընդհանուր օգտագործման են, հետևապես կարող են էլ ավելի բարելավվել՝ համատեղ ջանքերով դրանք բարելավելու և դրանք առավել արդյունավետ տնօրինելու միջոցներով:

Ժամանակի ընթացքում աղետների փոփոխությունները՝ առաջացումը, հաճախականությունը, ինտենսիվությունը, փոփոխվող այլ իրավիճակներ

Կլիմայի փոփոխություններն էական ազդեցություն են ունեցել համայնքային կյանքի վրա և բերել են զգալի փոփոխություններ. համաձայն քննարկման ամենատարեց մասնակցի՝ նախկինում ջրի մակարդակն այնքան կարող էր բարձրանալ, որ գետին մոտ հողամասերը ջրի տակ էին անցնում, իսկ հիմա այս վտանգը փոխարինվել է ջրի պակասով: Ջրային միջոցների սղությունը և սակավությունը նոր խնդիրներ է առաջ բերել, որոնք պահանջում են նոր լուծումներ:

Մեկ այլ խնդիր է համայնքներում արտադրական գոտիների նվազումը: Մասնավորապես՝ գործարանի փակման պատճառով ավելացել է արտագնա աշխատանքը, դա իր հերթին բերել է այլ խնդիրներ համայնքային կյանքում և տնային տնտեսություններում:

Նախկինում քիչ են եղել վնասատուները, հիվանդությունների թիվը, նախիրը նախկինում ավելի ուշ է դուրս եկել՝ կապված եղանակային փոփոխությունների հետ, փոխվել է նաև ջեռուցման սեզոնի տևողությունը, որը նախկինի հետ համեմատ, հիմա ավելի կարճ է: Մասնակիցները նշեցին, որ նախկինում վար ու ցանքն ավելի շուտ էին անում, օգոստոսի կեսից անում էին ցանքը, բերքահավաքը սկսվում էր օգոստոսի կեսից և շարունակվում մինչև նոյեմբեր: Փոխվել է նաև արտագնա աշխատանքի մեկնման ժամանակը և տևողությունը: Քչացել է արտագնա աշխատանքի մեկնող տղամարդկանց թիվը ՌԴ տարադրամի փոխարժեքի անկման պատճառով: Փոխվել են նաև որոշակի սովորույթներ, համայնքային կյանքի կարևոր իրադարձություններ. 30 տարի առաջ հերոսամարտը չի եղել, ամանորյա սթրես չեն ունեցել, վարկերի մարման շրջան չի եղել, ընդհակառակը՝ բանկերում ավանդներ են ունեցել: Սառնաղբյուրում տարիներ առաջ ակտիվ զբաղվել են կաթի մշակմամբ:

Համայնքներում գյուղատնտեսական աշխատանքներում որոշակի մոտեցումներ և մեթոդներ են փոխվել, օրինակ՝ տարածվել է քաղհանի նոր մեթոդ՝ թունաքիմիկատների միջոցով, բայց քչերն են այդ մեթոդից օգտվում: Ժամանակակից տեխնոլոգիաները նույնպես նպաստում են տնային աշխատանքների արագացմանը, թեև չեն թեթևացնում հողագործական աշխատանքը: Երիտասարդների զգալի մասը սովորում են Երևանում, սակայն բնակվում են համայնքներում, քանի որ Երևանում բնակության ծախսերն ավելի մեծ են:

Համայնքային կյանքում այս բոլոր փոփոխությունների արձանագրումը կարևոր քայլ է եղել տեսնելու և արձանագրելու փոփոխությունների դրական կամ բացասական հետևանքները, վերլուծելու դրանց հետևանքները և ներկա իրավիճակում փոփոխություններին ոչ միայն հարմարվելու, այլ նաև դրանց արձագանքելու անհրաժեշտությունը:

Աղետների ընկալման և արձագանքման, գյուղատնտեսական գործունեության գենդերային նկատառումներ

Աղետների ընկալման և արձագանքման մոտեցումներում հստակ տարբերություններ են դրսևորվել: Մասնավորապես՝ կանայք առավել պասիվ են եղել աղետների ներկայացման, դրանց ազդեցության վերաբերյալ քննարկումների հարցում: Համայնքներից մեկում մեթոդի կիրառմամբ նախատեսվող քարտեզը ամբողջովին գծվեց աշխարհագրության ուսուցչուհու կողմից: Մնացած կանայք բավականին պասիվ էին քարտեզի գծման և աղետների թվարկման գործում: Կանանց մոտ նշված չէին հետևյալ աղետները՝ քամիները, հողի էրոզիան, ճահճացումը: Տղամարդիկ ավելի շատ տեղեկատվություն էին ներառել՝ նշելով նաև հիվանդությունների և վնասատուների ազդման գոտիները, խոտհարքերը, անասնապահական հիմնական տարածքները և երաշտը, որոնք չկային կանանց մոտ: Ռեսուրսների և աղետների մասին առավել քիչ տեղեկատվությունը կանանց շրջանում կարող է լինել գիտելիքի և ոլորտի վերաբերյալ գենդերային

կարծրատիպերի արդյունք, քանի որ սովորաբար պաշտպանության, դիմակայելու, արտակարգ իրավիճակներում արձագանքելու գործառույթները վերապահված են եղել տղամարդկանց: Այնուամենայնիվ, այդ գիտելիքի պակասի արդյունքում ձևավորվում է նաև նվազ հետաքրքրություն, իմացություն, ապա նաև գործողություն՝ որևիցե ձևով արձագանքելու նշված խնդիրներին կամ մասնակից լինելու դրանց լուծմանը: Կանանց մոտ բացակայում էին որպես ռեսուրս առողջությունը, դրամական փոխհատուցումները, կոմունիկացիաները, որոնք նշված էին տղամարդկանց մոտ: Այս տարբերության պատճառները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ կանայք ավել շատ զբաղված են լինում ներընտանեկան հարցերով, երեխաների խնամքով, կենցաղային խնդիրներով, սոցիալական խնդիրներով, իսկ տղամարդկանց մոտ ֆինանսական հարցերը, կոմունիկացիաները ամենօրյա գործունեության մաս են:

Կանայք առավել ակտիվ էին համայնքային ռեսուրսները քարտեզագրելու հարցում, մասնավորապես՝ ակտիվների և ռեսուրսների մեջ ներառելով բնությամբ տրված ռեսուրսները, աղբյուրները, որոնք չկային տղամարդկանց մոտ:

Տնամերձ տնտեսություններում հողագործական աշխատանքն այս գյուղական համայնքներում մեծամասամբ կատարվում են կանանց կողմից, քանի որ տղամարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի: Աղետների կամ դեպքերի ժամանակ կանայք խորհրդակցում են տղամարդկանց հետ, սակայն խնդիրներն իրենք են լուծում: Արտագնա աշխատանքի մեկնումը դրական և բացասական ազդեցություն ունի: Ըստ քննարկման մասնակիցների՝ դրական է, քանի որ տղամարդիկ մնում և օգնում են գյուղատնտեսական աշխատանքներում, բացասական է, քանի որ եկամուտն է նվազում: Հացազգիների ցանքը կանայք իրենք են որոշում, իսկ երիտասարդ հարսները խորհրդակցում են առավել փորձառուների հետ: Այս մոտեցումը նաև ի ցույց է դնում առկա ավանդույթների փոխանցման ինստիտուցիոնալ կենսակերպի առկայությունը, որի պարագայում երիտասարդները, հատկապես երիտասարդ կանայք

փոփոխություններին մասնակից լինելու կամ դրանք նախաձեռնելու առավել քիչ հնարավորություններ ունեն։

Պայմանավորված արտագնա աշխատանքի ծավալներով՝ Գեղարքունիքի մարզում կանայք նաև նշեցին, որ ոչ պակաս հարստություն են գյուղի տղամարդիկ և գյուղի մշակութային գործիչները։

Տղամարդկանց երկարաժամկետ բացակայությունը նշված համայնքի բնակչության կազմի, ընտանիքի կենսագործունեության վրա տարբեր ազդեցություններ է թողնում՝ խախտելով ընտանիքների բնականոն գործունեությունը և հիմնականում համայնքային աշխատանքի ծանրաբեռնվածությունը թողնելով կանանց վրա։ Դա նաև ազդում է նրանց ընկալումների վրա՝ էլ ավելի կարևորություն և առաջնահերթություն տալու գյուղի տղամարդկանց։

Օրացույցների համեմատություններ

Օրացույցների համեմատությունը մասնակցային այս մեթոդաբանության կարևոր բաղկացուցիչ մաս է, որը հնարավորություն է տալիս դիտարկել առօրյա կենսագործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև վեր հանել կանանց և տղամարդկանց ընկալումների տարբերությունները՝ կլիմայի փոփոխության տեսանկյունից, քանի որ նախ նշվում են բնակավայրի կարևոր իրադարձությունները, ապա՝ նաև այդ իրադարձությունների ժամկետները 20-30 տարի առաջ։

Մասնակիցները նշել են սթրեսի, վտանգի, հիվանդության, սովի, պարտքի, խոցելիության փուլերը։ Ըստ նրանց սթրեսի շրջանը սկսվում է Ամանորից առաջ և շարունակվում է ողջ տարին, քանի որ վարկեր են վերցնում, կոմունալ վճարումներ են մուծում, որը լրացուցիչ ֆինանսական խնդիրներ է ստեղծում։ Կանայք նշեցին աթարի պատրաստումը, վայրի հավաքի շրջանը, փակոցներ անելու՝ պահածոներ պատրաստելու շրջանը, բրդյա վերմակների պատրաստման շրջանը։

Տղամարդկանց մոտ նշված էր ջեռուցման սեզոնը, ցրտահարությունը, անասունների մորթը և օղու թորումը, որոնք չկային կանանց մոտ (Հավելված 2. Նկար 3)։

Ապագայի սցենարներ

Ապագայի սցենարները ներառել են առկա խնդիրների լուծման հնարավոր ջանքերը, դրանց արդյունքները և ազդեցությունը ապագայի վրա՝ դիտարկելով կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները: Միևնույն ժամանակ, նաև մեթոդաբանության հիման վրա տարբերակվել են անհատական և համայնքային ջանքերը, մասնավորապես՝

- անհատական կամ տնային տնտեսությունների գործողությունները և հնարավոր քայլերը՝ դիմակայելու առկա խնդիրներին,
- համայնքային մակարդակում աղետներին և ռիսկերին արձագանքելու և դիմակայելու գործողությունները:

Քննարկումը ցույց է տվել, որ այս մեթոդաբանությամբ ներգրավված գնահատումը հնարավորություն է տվել նաև մասնակիցներին տեսնել խնդրի լուծումներն առկա մարտահրավերներին դիմակայելու առումով, առաջադրել քայլեր և մոտեցումներ, ինչը հնարավորություն կտա նվազեցնել ռիսկերի և աղետների ազդեցությունը:

Տնային տնտեսության շրջանակում առաջարկվող գործողություններն են՝

1. Կաթիլային ոռոգում, ջրի տնտեսում, անձրևաջրերի կուտակում, կարկտապաշտպան ցանց, ծխահարում, ոռոգում :

Համայնքային մակարդակում առաջարկվող գործողություններն են՝

1. ջրհորների կառուցում,
2. ոռոգման ցանցի վերանորոգում,
3. ջրհավաք ավազանների կառուցում,
4. հակակարկտային ցանցերի տեղադրում,
5. պոմպերի տեխնիկական վերազինում և քանակի ավելացում,
6. տեխնիկայի տրամադրում:

Առավել երկարաժամկետ համայնքային գործողությունները պահանջում են նաև առավել մեծ ռեսուրսներ։ Դրանք ներառել են՝

- երաշտադիմացկուն սորտերի մշակում, կանաչապատում,
- ոռոգման ցանցի բարելավում և ավելացում,
- ջրհավաք ավազանների, ջրամբարների կառուցում,
- պոմպերի տեխնիկական վերազինում և քանակի ավելացում,
- հակակարկտային կայան, անհրաժեշտ տեխնիկայի տրամադրում, իրազեկում,
- դաշտապաշտպան անտառաշերտի տնկում։

Արտաքին աջակցության մեծ ակնկալիք և կարիք կա հատկապես համայնքային նշանակության գործողությունների իրականացման մասով։ Մասնավորապես, անհրաժեշտ է փորձի փոխանակման, վերապատաստումների, խորհրդատվության տրամադրման հարցերով աջակցություն։ Մեծ է կարիքը ֆինանսական աջակցության, իրացման շուկաների, նոր ցրտադիմացկուն սորտերի ներկրման, լիզինգի, վնասի փոխհատուցման, սուբսիդավորման ծրագրերի իրականացման հարցերում։

Հատկանշական է, որ Դդմաշեն համայնքի քննարկումներին մասնակիցները առավել քիչ են նշվել գործողություններ, որ հնարավոր է իրականացնել տեղական հասանելի միջոցներով կամ տնային տնտեսությունների կողմից (Հավելված 2. Նկար 4)։

Եզրահանգումներ

Ընդհանուր առմամբ ներկայացված մեթոդաբանությամբ երկու համայնքներում գնահատումների իրականացումը վեր է հանել Հայաստանի երկու մարզերում գտնվող գյուղական համայնքներում աղետների և ռիսկերի հիմնական սպառնալիքները, առկա միտումները, դրանց դիմակայելու պրակտիկան, ռեսուրսներն ու ակտիվները, ինչպես նաև անհատական և համայնքային մակարդակներում հնարավոր լուծումները՝ կանխելու կամ մեղմացնելու դրանց հետևանքները:

Գնահատման արդյունքում վերհանված առաջնային խնդիրներն են կլիմայի փոփոխության առաջ եկած մարտահրավերները՝ ցրտահարությունը, երաշտը, կարկուտը: Աղետները բնութագրական են երկու համայնքներին, դրանցից տուժում է բնակչության զգալի մասը, գյուղատնտեսական գործունեության արդյունքում վնասվում են ակտիվները, ռեսուրսները և ի չիք են դառնում կամ նվազում են ակնկալվող բարիքները, եկամուտները, նոր ակտիվները:

Կանանց և տղամարդկանց ընկալումները աղետների և ռիսկերի վերաբերյալ տարբերվում են, հատկապես դրանց առաջնայնության, դրանց արձագանքման առումով: Այս առանձնահատկությունները պայմանավորված են այն սոցիալական դերերով, որոնք կանայք և տղամարդիկ իրականացնում են այս երկու համայնքներում: Կարևոր է նշել, որ ակտիվների մեջ ներառված են բնության ռեսուրսները, շենք շինությունները, հոգևոր մշակութային ենթակառուցվածքները: Հետաքրքիր արդյունք է, որ որպես ակտիվ առավել քիչ են դիտարկվել մարդկային ներուժը և առողջությունը՝ որպես դրա անհրաժեշտ նախապայման: Առողջության՝ որպես ռեսուրսի ոչ կարևոր լինելը բավականին լուրջ ահազանգ է՝ սոցիալ-մշակութային առումով այս ներուժին և դրա պահպանմանը ոչ համարժեք վերաբերմունքի առումով:

Համայնքների քարտեզագրումը կարևոր մոտեցում էր, որի արդյունքում դիտարկվեց համայնքների վիզուալիզացիան՝ տարբեր խմբերի կողմից: Համայնքների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ այս հարցում ևս պատկերները մոտ են, իհարկե հետաքրքիր էր վեր հանել նաև համայնքում այն ակտիվները, որոնք

քարտեզագրվեցին հիմնականում կանանց կողմից, սակայն ներկա պահին իրենց ողջ պոտենցիալով չեն դիտարկվում, օրինակ՝ եկեղեցիները, մատուռները, աղբյուրները, որոնք համայնքներին կարող են տալ նաև տուրիստական առավելություն: Մյուս կողմից տղամարդկանց քարտեզներն առավել շատ տեղեկատվություն էին պարունակում՝ կրկին տնային տնտեսությունից դուրս առավել շատ ներգրավված լինելու, ինչպես նաև համայնքային կյանքին վերաբերող հարցերում որոշումների կայացման մեջ առավել մեծ դերակատարություն ունենալու առումով, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսների կառավարման առումով: Մյուս կողմից տղամարդկանց արտագնա աշխատանքի արդյունքում, կանանց վրա է մնում հիմնական հարցերի, տնային տնտեսության կենսագործունեության ողջ հարցերը, որը բավականին ծանրաբեռնվածություն է տալիս, քանի որ բացի դրանից կանայք նաև ներգրավված են տնամերձ հողակտորների մշակման մեջ:

Աղետների դիմակայության հարցում որոշակի տարբերություններ կային երկու համայնքների արձագանքների և գնահատականների մեջ: Մասնավորապես՝ Դդմաշեն համայնքից մասնակիցներն առավել քիչ են հենվում սեփական ռեսուրսների, տնային տնտեսությունների կողմից հնարավոր միջամտությունների վրա, ի տարբերություն մյուս համայնքի, որտեղ և՛ արտաքին աջակցության, համայնքային ծրագրերը, և՛ հնարավոր անհատական՝ տնային տնտեսությունների կողմից գործողություններն ավելի համամասնական են:

Մեթոդի առավելությամբ այս գնահատումը թույլ տվեց նաև վեր հանելու այն պոտենցիալը, որ կա այս ոլորտներում և դիտարկելու դրանց կիրառումը՝ դիմագրավելու աղետներին: Նաև, հնարավորություն եղավ վերլուծելու համայնքային ռեսուրսները՝ դրանց առավել օպտիմալ և նպատակային օգտագործման մասին:

Ընդհանուր առմամբ աղետների դիմակայության պրակտիկան մեծ չէ, և հաճախ առկա ռեսուրսների շրջանակում սահմանափակ ծավալներով է իրականացվում: Հատկապես համայնքային պրակտիկաները դեռևս շատ նեղ և սահմանափակ են, իսկ դրանց ազդեցության ծավալը ավելի մեծ է, հետևապես առավել կարևոր:

Անհատական ջանքերը ներառում են ծխահարումը, անձրևաջրերի հավաքումը, կաթիլային ոռոգումը, տնային տնտեսության շրջանակում հնարավոր այլ գործողությունները: Համայնքային ջանքերն առավել մեծ ազդեցություն ունեն, հետևապես առավելապես կարևորվել են երկու համայնքներում էլ: Դրանք ներառում են ջրհորների կառուցումը, ոռոգման ցանցի վերանորոգումը, հակակարկտային ցանցերի տեղադրումը: Կան նաև միջոցներ, որոնք երկարաժամկետ և կայուն ազդեցության միջոցներ են, սակայն առավել մեծ ռեսուրսներ և մոբիլիզացիա են պահանջում: Դրանք ներառում են երաշտադիմացկուն սորտերի մշակումը, կանաչապատումը, հակակարկտային կայանի տեղադրումը, անհրաժեշտ տեխնիկայի տրամադրումը, դաշտապաշտպան անտառաշերտի տնկումը: Արտաքին աջակցության մեծ ակնկալիք և կարիք կա հատկապես համայնքային նշանակության գործողությունների իրականացման մասով: Մասնավորապես, համայնքները մեծ կարիք ունեն ժամանակակից գյուղատնտեսության և աղետների դիմակայունության փորձի փոխանակման, վերապատրաստումների, խորհրդատվության: Բացի այդ, մեծ անհրաժեշտություն կա իրացման շուկաների ուղղորդման, նոր ցրտադիմացկուն սորտերի ներկրման, լիզինգի, վնասի փոխհատուցման, սուբսիդավորման ծրագրերի իրականացման համատեքստում:

Համայնքային գնահատման արդյունքները ցույց են տվել համայնքի ռեսուրսների, դրանց օգտագործման և տիրապետման, աղետների, համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի միջև առկա ճեղքերը, որոնք հիմնականում հետևանք են անհատական և համայնքային գիտելիքի և փորձի պակասի, ենթակառուցվածքների և դրանց արդիականացման խնդիրների, համայնքային մոբիլիզացիայի և ռեսուրսների համատեղման պրակտիկաների բացակայության: Ընդհանուր առմամբ աղետները և դրանց դիմակայումը երբեք բավարար արդյունավետ չէ, երբ այն դառնում է անհատական ջանք՝ յուրաքանչյուր տնային տնտեսությունները՝ առանձին-առանձին, հետևապես կարևորվում է հարթակների ստեղծումը, որը կմիավորի այս խնդիրների շուրջ այն համայնքներին, որոնք լուծում են միանման խնդիրներ:

Նման հարթակները կարող են լինել որոշակիորեն ֆորմալ՝ համայնքների ավագանիների, խորհրդակցական մարմինների շրջանակում, կարող են ստեղծվել նաև համայնքի բնակիչների նախաձեռնությամբ: Այնուամենայնիվ, որպես կանոն, նման նախաձեռնողականություն գյուղական համայնքներում առավել քիչ է դրսևորվում, հետևապես ցանկալի կլինի, որպեսզի ՏԻՄ ղեկավարները և ավագանին նախաձեռնեն մասնակցային հարթակի ստեղծումը և դրա շարունակական զարգացումը՝ ի նպաստ համայնքների:

Հավելվածներ

Հավելված 1. Հետազոտության գործիքներ/ մոդուլներ

Գրառումների ձևաթուղթ

PACDR գործընթացի արդյունքների փաստաթղթավորումը առանցքային է գիտելիքների և տեղեկատվության օգտագործման համար հետագա համայնքային գործողությունների համար: Յուրաքանչյուր վարժությունից հետո գրառում կատարողները պետք է ամփոփեն և փաստաթղթավորեն արդյունքները: Հաշվետվությունների ձևանմուշներն ընդգրկում են յուրաքանչյուր վարժության հիմնական ասպեկտները և օգնում են նշում կատարողներին պատրաստել վարժության հաշվետվություններ համայնքի և օժանդակող թիմի և աջակցող կազմակերպությունների համար:

Ձևաթուղթը պարունակում է չորս բաժին: A, B և C բաժինները ներառում են ընդհանուր տեղեկություններ և վարժությունների հիմնական արդյունքները: Այս բաժինները համայնքի համար հաշվետվությունների էական մասերն են: Բաժին D-ի տեղեկատվությունը հույժ գաղտնի է և պետք է ներառվի միայն ներքին հաշվետվությունների համար: PACDR գործընթացներն իրականացնող կամ աջակցող կազմակերպությունները կարող են օգտագործել այս նյութը իրենց ներքին հաշվետվությունների, գործընթացի մոնիտորինգի և ղեկավարման, գործընթացի ներքին գնահատման և քննարկումների և հաջորդ վարժանքների նախապատրաստման համար: Աջակցող կազմակերպությունը և համայնքը որոշում են վերջնական փաստաթղթերի լեզուն(ները): Սա հիմնականում կախված կլինի նրանից, թե ինչպես այն օգտագործել գնահատման ընթացքում և հետո: Կարևոր է նաև որոշել, թե որ տեղեկատվությունը պետք է լինի հրապարակային (ներառված է A, B, C բաժիններում) և որը կարող է օգտագործվել միայն ներքին նպատակների համար (նշված է առանձին):

Վարժության հաշվետվության ձեւաթղթի կառուցվածքը

A. Տեղեկատվություն

B. Վարժության հիմնական բացահայտումները

C. Քննարկումների եւ ուղղորդող հարցերի հիմնական բացահայտումները

D. **Գործընթացի գնահատում, լրացուցիչ տեղեկատվություն, բաց հարցեր, հիմնական պատկերացումներ (գաղտնի կամ ներքին օգտագործում)**

• Աշխատանքային պայմաններ, մթնոլորտ (բաց, հետաքրքրված, ամաչկոտ, լարված, գերակշռող…)

• Մասնակցության աստիճանը (տղամարդիկ, կանայք, առաջնորդներ, սովորական մարդիկ, ծերեր, երիտասարդներ…)

• Ուժեղ և թույլ կողմերը
• Հարցի և հրահանգների ըմբռնման աստիճանը
• Ֆասիլիտացիայի և մեկնաբանման որակ
• Համապատասխանություն մասնակիցների համար
• Մասնակիցների կողմից չնշված կարևոր ասպեկտներ (անտեղյակ, չափազանց խնդրահարույց, ռիսկային, կոնֆլիկտներից խուսափելու, տաբու…)
• Բաց հարցեր, անելիքներ, հետագա ընթացք
• Հիմնական պատկերացումներ

Վարժություն 2. Աղետների առաջնահերթություններ
A. Տեղեկություն
Ամսաթիվ՝ Վայրը՝ Ֆասիլիտատորների թիմի անունները և դերերը՝ Մասնակիցների թիվը և բնութագիրը(սեռ, ներկայացուցիչներ, փոքրամասնություններ և այլն):
Վարժության հիմնական արդյունքները/բացահայտումները
○ Համայնքի ամենադժվար պահերը և աղետները, որոնց առնչվում են.
○ Վտանգների, խոցելի ժամանակաշրջանների և այլնի փոփոխությունները և միտումները և դրանց պատճառները.
○ Առավել տուժած մարդիկ.
○ Աղետների դասակարգում.
○ Աղետների հզորությունը և հաճախականությունը.
D. Գործընթացի գնահատում, լրացուցիչ տեղեկատվություն, բաց հարցեր, հիմնական պատկերացումներ (գաղտնի)

Վարժություն 3. Ռեսուրսների և աղետների քարտեզ
A. Տեղեկություն
B. Վարժության հիմնական արդյունքները/բացահայտումները
○ Կենսամիջոցների ամենակարևոր ակտիվներն ու ռեսուրսները.
○ Նշված ամենակարևոր վտանգները/աղետները.
○ Ռեսուրսները, որոնց սպառնում են աղետները.
○ Գենդերային նկատառումներ.
C. Քննարկման և ուղղորդող հարցերի հիմնական արդյունքները.
○ Քարտեզների համեմատությունը՝ նմանություններ, տարբերություններ, բաց թողնված կետեր.
○ Քարտեզներում առկա տարբերությունների պատճառները.

○ Ժամանակի ընթացքում աղետների փոփոխությունները՝ առաջացումը, հաճախականությունը, ինտենսիվությունը.
○ Առավել տուժած մարդիկ.
○ Ռեսուրսների հասանելիություն և վերահսկողություն.
D. Գործընթացի գնահատում, լրացուցիչ տեղեկատվություն, բաց հարցեր, հիմնական պատկերացումներ (գաղտնի)
Վարժություն 4. Սեզոնային օրացույց
A. Տեղեկություն
B. Վարժության հիմնական արդյունքները/բացահայտումները
○ Հիմնական գործողությունները և իրադարձությունները.
○ Ներկայիս իրավիճակի և 30 տարի առաջվա իրավիճակի հիմնական տարբերությունները.
○ Սթրեսի, վտանգի, հիվանդության, սովի, պարտքի, խոցելիության փուլեր…
○ Գենդերային նկատառումներ.
C. Քննարկման և ուղղորդող հարցերի հիմնական արդյունքները.
○ Օրացույցների համեմատությունը՝ նմանություններ, տարբերություններ, բաց թողնված կետեր.
○ Օրացույցների տարբերությունների պատճառները.
○ Սեզոնային գործողությունների և իրադարձությունների փոփոխությունները.
○ Փոփոխվող իրավիճակի պատճառները (կլիմայի փոփոխություն, հակամարտություններ, ռեսուրսների վրա ճնշման ավելացում, քաղաքականություն…).
○ Ապագայի սցենարներ (բարելավում, ոչ մի փոփոխություն, վատթարացում).
D. Գործընթացի գնահատում, լրացուցիչ տեղեկատվություն, բաց հարցեր, հիմնական պատկերացումներ (գաղտնի)
Վարժություն 5. Մատրիցա
A. Տեղեկություն
B. Վարժության հիմնական արդյունքները/բացահայտումները
○ Համայնքի կենսամիջոցների կամ ակտիվների համար առավել վնասակար աղետներ.
○ Կենսամիջոցների ռեսուրսները կամ ակտիվները, որոնք առավել շատ են տուժում վտանգներից.
○ Գենդերային նկատառումներ.
C. Քննարկման և ուղղորդող հարցերի հիմնական արդյունքները.
○ Մատրիցաների համեմատությունը՝ նմանություններ, տարբերություններ, բաց թողնված կետեր.
○ Մատրիցաների տարբերությունների պատճառները.
○ Պատճառները, որոնցով որոշ ռեսուրսներ առավել ուժեղ ազդեցություն են կրում, իսկ մյուսները՝ ավելի քիչ կամ ընդհանրապես ազդեցություն չեն կրում.

○ Հետևանքներ համայնքի համար, երբ հիմնական ռեսուրսները կամ ակտիվները (հող, գյուղատնտեսություն, անասնաբուծություն, առողջություն) ենթարկվում են ուժեղ ազդեցության (սով, հիվանդություններ, աղքատություն, հակամարտություններ, միգրացիա, համերաշխություն, հումանիտար օգնություն…).
○ Առավել տուժած մարդիկ (հողազուրկներ, հաշմանդամություն ունեցողներ, տարեցներ, միգրանտներ, բնիկներ և այլն).
○ Ինչու՞ են որոշ աղետներ ավելի վնասակար, քան մյուսները.
○ Որտե՞ղ և ինչպե՞ս է աճել համայնքի խոցելիությունը վերջին տարիներին.

D. Գործընթացի գնահատում, լրացուցիչ տեղեկատվություն, բաց հարցեր, հիմնական պատկերացումներ (գաղտնի)

Վարժություն 6. Աղետների ազդեցության աղյուսակ
A. Տեղեկություն
B. Վարժության հիմնական արդյունքները/բացահայտումները
○ Աղետների ամենակարևոր բացասական հետևանքները.
○ Այս ազդեցություններին ամենաարդյունավետ և կայուն տեղական արձագանքները.
○ Գենդերային նկատառումներ.
C. Քննարկման և ուղղորդող հարցերի հիմնական արդյունքները.
○ Աղյուսակների համեմատությունը՝ նմանություններ, տարբերություններ, բաց թողնված կետեր.
○ Աղյուսակների տարբերությունների պատճառների.
○ Լրացուցիչ տեղային պատասխաններ, որոնք նշված չեն խմբերում (կիրառվում են միայն շատ քիչ մարդկանց կողմից, մշակութային առումով անընդունելի, տաբու…).
○ Ազդեցություններ գոհացուցիչ պատասխաններով, ազդեցություններ թույլ պատասխաններով.
○ Արդյունավետության և կայունության ընդհանուր արդյունք.
○ բացասական ազդեցություններին արձագանքելու ցածր կարողություններ ունեցող մարդիկ (հողազուրկներ հաշմանդամներ, տարեցներ, միգրանտներ, բնիկներ և այլն).
○ Վտանգներ և բացասական ազդեցություններ, որտեղ համայնքը ցանկանում է բարելավել իր արձագանքները/պատասխանները.

D. Գործընթացի գնահատում, լրացուցիչ տեղեկատվություն, բաց հարցեր, հիմնական պատկերացումներ (գաղտնի)
Վարժություն 8. Գործողությունների պլանի մշակում
A. Տեղեկություն
B. Վարժության հիմնական արդյունքները/բացահայտումները
○ Կարճաժամկետ գործողություններ.
○ Երկարաժամկետ գործողություններ.
○ Անհատական կամ տնային տնտեսությունների գործողություններ.
○ Համայնքային գործողություններ.
○ Տեղական հասանելի ռեսուրսներով իրականացվելիք գործողություններ.
○ Գործողություններ, որտեղ անհրաժեշտ են այլ շահագրգիռ կողմեր (ռեսուրս-մարդիկ, կառավարություն, ֆինանսավորողներ).
○ Մասնակիցների և շահագրգիռ կողմերի պարտավորությունները.

D. Գործընթացի գնահատում, լրացուցիչ տեղեկատվություն, բաց հարցեր, հիմնական պատկերացումներ (գաղտնի)

Գործողությունների ցանկ

N	*Գործողության նկարագիր*	*Ընդհանուր խմբով կամ առանձին՝ կանայք /տղամարդիկ*	*Տևող. /րոպե/*	*Անհրաժեշտ նյութեր*
ՄՈԴՈՒԼ 2- 4 ԺԱՄ, 30 ՐՈՊԵ	Հանդիպման մեկնարկ, ողջույնի խոսք և ծանոթացում, օրակարգի ներկայացում	Ընդհանուր	25	
	Կլիմայի փոփոխության հիմնահարցերի, ընթացիկ քաղաքականությունների ներածական ներկայացում	Ընդհանուր	15	Սահիկաշար
	Վարժ.1. **Փազլ** – «Եղանակային երևույթ – աղետ-առաջնային ազդեցություն-երկրորդային ազդեցություն» արդեն պատրաստի քարտերի ներկայացում մասնակիցներին, ովքեր պետք է քարտերը դասավորեն ըստ պատճառահետևանքային կապի	Ընդհանուր	10	Փազլի քարտեր մեկ աղետի վերաբերյալ
	Վարժ. 2. **Բնակավայրի աղետներն ըստ առաջնահերթությունների** – մասնակիցների կողմից բնակավայրին բնորոշ աղետների թվարկում, ցանկի կազմում, ապա երկու հոգանոց խմբերի կողմից առաջնային աղետների առանձնացում	Ընդհանուր	40	Ֆլիպ չարտ, մարկերներ, կպչուն սլաքներ
	Վարժ. 3. **Ռեսուրսների և աղետների քարտեզ** – Մասնակիցները նկարում են իրենց բնակավայրի քարտեզը՝ նշելով առկա ռեսուրսները և աղետները պայմանական նշաններով	Առանձին	40	Քարտեզների թղթեր, մարկերներ, գունավոր մատիտներ, թղթե սկոչ
	Քննարկում 1. Խմբերի կողմից իրենց քարտեզների ներկայացում, քննարկում՝ ըստ հարցերի	Ընդհանուր	50	Քննարկում 1-ի հարցեր
	Վարժ. 4. **Սեզոնային օրացույց** – Մասնակիցները կազմում են օրացույցը՝ նշելով իրադարձությունը և ժամանակահատվածը, ապա ֆասլիտատորները խնդրում են մասնակիցներին	Առանձին	40	Օրացույցի ձևաթղթերը, մարկերներ

	քննարկել, թե արդյո՞ք նույնն էր իրադարձությունների ժամանակահատվածը 20-30 տարի առաջ և նշել օրացույցի վրա այլ գույնով			
	<u>Քննարկում 2.</u> Խմբերի կողմից իրենց օրացույցների ներկայացում, ֆասիլիտատորների կողմից քննարկման ծավալում ըստ հարցերի	Ընդհանուր	50	Քննարկում 2-ի հարցեր
ՍՈՌՈՒԼ 3 – 1ԺԱՄ, 30 ՐՈՊԵ	Վարժ. 5. **<u>Մատրիցա</u>** -Ֆասիլիտատորները թվարկում են վարժություն 2-ում նշված առաջին երեք առաջնահերթ աղետները, ապա մասնակիցները գնահատում են դրանց ազդեցությունը 0-3 միջակայքում, ընդհանուր արդյունքը հաշվվում է միայն ընդհանուր քննարկման ժամանակ	Առանձին	40	Մատրիցայի ձևաթղթեր, մարկերներ
	<u>Քննարկում 3.</u> Խմբերի կողմից մատրիցաների ներկայացում, ֆասիլիտատորների կողմից քննարկման ծավալում ըստ հարցերի	Ընդհանուր	50	Քննարկում 3-ի հարցեր
ՍՈՌՈՒԼ 4 – 1ԺԱՄ, 30 ՐՈՊԵ	Վարժ. 6. **Աղետների ազդեցության աղյուսակ** – Մասնակիցներն ամբողջացնում են աղետների ազդեցության աղյուսակներն ըստ ձևաթղթի	Առանձին	40	Աղյուսակի ձևաթուղթ, գունավոր թղթեր, մարկերներ, սոսինձ
	Քննարկում 4. Խմբերի կողմից աղյուսակների ներկայացում, ֆասիլիտատորների կողմից քննարկման ծավալում	Ընդհանուր	50	Քննարկում 4-ի հարցեր
ՍՈՌՈՒԼ 6 – 2 ԺԱՄ, 30 ՐՈՊԵ	Վարժ. 8. **Գործողությունների պլանի մշակում** – Ըստ վարժություն 1-6-ի նյութերի՝ մասնակիցները լրացնում են գործողությունների պլանի ձևաթուղթը	Ընդհանուր	50	Գործողութ-յունների պլանի ձևաթուղթ, գունավոր թղթեր, սոսինձ
	Քննարկում 5. Գործողությունների պլանի ամփոփում, մասնակիցների, համայնքի կողմից շարունակականության խթանում, ամփոփում	Ընդհանուր	100	Քննարկում 5-ի հարցեր

Հավելված 2. Նկարներ

Նկար 1. Աղետների նկարագիր



Նկար 2. Ռեսուրսներ և ակտիվներ. աղետների ազդեցության մատրիցա

Կանայք	Տղամարդիկ
	
	

Նկար 3. Կարևոր իրադարձություններ. սեզոնային օրացույց

Կանայք	Տղամարդիկ
	
	

Նկար 4. Դիմակայունության միջոցներ



Նկար 5. «Կանանց և տղամարդկանց գյուղերը». ռեսուրսների և աղետների քարտեզ

Կանայք	Տղամարդիկ